Այս պարագաներից համոզուած, ես ենթադրում եմ, որ Փաշա-Փագի, Սրբահանի, Ցոլտակ լճակի, Արագածի եւ միւս արձանները Վիշապազանց պաշտամունքի՝ Ջրապաշտութեան շրջանից մնացորդներ են, որոնք ապացուցանում են, որ Ծորոխի Աւազանում կրակապաշտութիւնից, մոխրապաշտութիւնից շատ դարեր առաջ հաստատուած էր Վիշապազանց պաշտամունքը. Մեծամօր անբիծ, անարատ ջրերի — Անահիտի դերագոյն իշխանութեան շրջանը, Միհր-Արեւ Աստուծոյ եւ Արամազդի հետ։ Հետագայ դարերում նոյն իսկ ուրարտական շրջանից յետոյ պիտի մտած լինի կրակապաշտութիւնը-մոխրապաշտութիւնը։

Մոխրապաշտութեան մուտքից շատ հին է բնապաշտութիւնը եւ Վիշապազանց Ջրապաշտութիւնը, քանի որ ամենահին յիշատակարանները՝ Ջրանցքների նախնական շինութիւնները կազմուած են Աչքագարեան (Թեփէ-գեօզ) վիմթխարի եւ կարծր քարերով, որոնք մոխրապաշտութիւնից շատ դարեր առաջ են գոյութիւն ունեցել։ Էլամից — Սինաար դաշտը իջնող Քարուն (Ուլայ) գետի ձախակողմեան-հարաւային մի մեծ վտակը, հնումը ակկատ-սումերների շրջանում կոչուել է Ծ ե ր ր ո խ (Տես Հելմոլդ, Մարդու Պատմութիւնը, հատ. Գ. էջ 8 եւ քարտէզը)։ Այս Ծերրոխ անունը արդեօք կապ չունի՞ մեր Ծորոխի հետ։ Այս